70 գրրատով չարեալ. եւ կայր առջեւն տասն կան-
թեղ կախեալ մեծամեծք եւ մարդաչափք՝
Սպանիու, Ֆռանցու եւ այլ թագաւորաց
գրկած. զի տարեն մի ճանապարհէ գան առ
նա յուխտ վասն բազում սքանչելեացն: Զի
75 Ֆռանկաց աշխարհն եւ Լեհ, ամէն եկեղեցի
սահմանք է, զինչ սրբոյ անուն որ լինի եւ
զինչ սքանչելիք որ արարեալ է, զամէնն կու
նախչեն տախտակաց վրայ. բայց սորա հա-
զար, երկուհազար տախտակ կայր գրած.
80 զորս ի բազմաց մինն ասացից: Զոր մի ոմն
հեռաստանէ ախտաժէտ գոլով՝ լուաւ զմեծ
սքանչելիս սուրբ պատկերիս. գայր առ նա
մեծաւ յուսով. եւ հասեալ ի գաւառ մի ան-
հաւատ հերետիկոսաց՝ կալան զնա եւ տա-
85 բան ի մեծն: Եւ նա եհարց թէ Ո՞ւր երթաս.
ասէ ցնա. ի Մատոնա (ասէ) Լ(օրէթ): Նոքա
ասեն այպանելով. Եւ զի՞նչ ընծայ տանիս
նմա, որպէս օրէն է: Եւ նա ասէ. Զիս եւ
զիմ սիրտս: Նոքա ասեն. Ամենայն ոք որ ըն-
90 ծայ տանի, ի ձեռս ունի եւ դու ոչ. վասն այն
պարտ է զի եւ դու ի ձեռս ունիցիս զպար-
գեւս: Եւ պեղծքն ճեղքեալ զորովայնն հանին
զսիրտն եւ եատուն ի ձեռքն եւ ասեն. Տար
այսպէս: Իսկ նա զօրութեամբն Աստուծոյ եւ
95 չնորհօք պատկերին զնայր վաղէր արագըն-
թաց խնդութեամբ մինչեւ ի սուրբն Լօրէթ.
եւ անկեալ առաջի սուրբ պատկերին ասէր

81 յախտաժէտ: — 95 չնօրհօք... յարագընթաց: